- Կուրի բեղաձուկ:

Ձկնային տնտեսություններից այստեղ է ներթափանցում ծիածանախայտը: Կենդանական աշխարհի՝ ձկների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, գլխային հանգույցի պատվարին կից նախատեսված է տեղադրել ձկնուղի: Ձկնուղին պետք է ապահովվի հաշվարկային այն ջրաքանակը և ձկնուղում ջրի այն արագությունը, որն անհրաժեշտ է ձկների անարգելք տեղաշարժի համար:

Ձկնանցարանները հնարավորություն են տալիս նաև ապահովելու իխտիոֆաունայի ազատ անցումը հիդրոհանգույցի ներքին բյեֆից վերին բյեֆ և հակառակ ուղղությամբ: Ձկնուղու չափերը նախագծվել են, հաշվի առնելով Չանախչի գետի օգտագործվող գետահատվածին բնորոշ ձկնատեսակները: Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակներ Չանախչի գետում չկան:

7.7 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին << կառավարության սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշմամբ հաստատվել է՝

- 1) Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը,
- 2) Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները,

Կենսաբազմազանության պահպանությունը Հայաստանում հիմնականում իրականացվում է ԲՀՊՏ-ներում, որտեղ կենտրոնացված է ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70 %-ը, այդ թվում՝ հազվապյուտ, կրիտիկական վիճակում պտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը։ Ներկայումս հանրապետությունում պորձում են հետևյալ ԲՀՊՏ-ները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 387054 հա կամ << ընդհանուր տարածքի 13.1 տոկոսը՝

- 3 պետական արգելոցներ («Խոսրովի անտառ», «Շիկահող» և «Էրեբունի»), որոնք գրաղեց-նում են 35 439.6 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19 %-ը.
 - 4 ազգային պարկեր («Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» և «Արևիկ»), որոնք գրաղեցնում են 236 802.1 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը,
 - 232 բնության հոլշարձաններ,
 - 27 պետական արգելավայրեր, որոնք գրաղեցնում են 114 812.7 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 3.95 %-ը:
- Վերջին տարիներին փոփոխվել են կենսաբազմազանության վրա բացասական ներպործության ուժգնությունը և ազդեցության ենթարկված էկոհամակարգերի տարածական ցուցանիշները։ Հարկ է նշել, որ կենսաբազմազանության կորուստները, ինչպես նաև էկոհամակարպային ծառայությունների փոփոխությունները շատ դեպքերում միայն մեկ պործոնի արդյունք չեն, այլ համայիր ներպործությունների հետևանք են։

Ուսումնասիրվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում։ Դեբետ գյուղին համաեմատաբար մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքներն են՝ «Դիլիջան» ազգային պարկը և «Մարգահովիտ» պետական արգելավայրը, որոնք գտնվում են գործունեության տարածքից համապատասխանաբար 10 և 15կմ հեռավորությունների վրա։ Զրընդունիչ հանգույցի հարևանությամբ, մոտ 50 մ հեռավորության վրա <<Գուգարքի>> անտառունտեսության տարածքի սահմաններն են։

<< կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է << տարածքի բնության հոլշարձանների ցանկը։

<< Լոռու մարզում հաշվառված բնության հուշարձաններից գործունեության տարածքներից ամենամոտ գտնվող հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7.

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը	Հեռավորությունը գործունեության տարածքից
«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Լոռու մարզ, Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում	12.5կմ
«Դսեղի Ծովեր» լիճ	Լոռու մարզ, Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիդաշ լեռնազագայթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում	13.6կմ

<<Զանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցման աշխատանքները չեն կարող որևէ կերպ ազդել հուշարձանների վրա:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱՉԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

8.1 ՈՒԽԱԿԵՐԻ ԳՆԱՀԱՍԹՈՒՄ

<<Զանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցումից-վերագինումից և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական ազդեցիկ գործոններն են՝

- <<Զանախչի 2>> ՓՀԵԿ-ի նոր հիդրոտեխնիկական կառուցների համար հողատարածքի գրաղեցում /ջրընդունիչ հանգույց, խողովակաշար/

- շինարարական աշխատանքների ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհի վրա;

- գետի հունում ջրաքանակի պակասեցում ֆՀանախչի 2! ՓՀԵԿ-ի շահագործման ընթացքում:

- <<Զանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցման-վերագինման աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական հետևանքները:

Ստորև դիտարկվում են այդ ազդեցությունները.

- <<Չանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցման համար նոր հիդրոտեխնիկական կառուցվածքների շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ՝ մթնոլորտային օդի, հողի, ջրի, գետի ռեժիմների, բուսական և կենդանական աշխարհի վրա:

- <<Չանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցման աշխատանքների ժամանակ հնարավոր ազդեցությունը շրջակա տարածքների վրա շինարարության փուլում կարտահայտվի հողային աշխատանքների իրականացմամբ, որը կուղեկցվի ծխագագերի և փոշու ժամանակավոր արտանետումներով և լանդշաֆտի ժամանակավոր խախտմամբ:

8.2 Շինարարական աշխատանքների նկարագիրը

Շինարարական աշխատանքների համար օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները որոնք օգտագործվում են ՓՀԵԿ-ի կառուցների սպասարկման համար: Շինհրապարակները կնախատեսվեն գոյություն ունեցող, ճանապարհների երկարությամբ: Վերակառուցման աշխատանքների ընթացքում նոր հողակտորների հատկացման անհրաժեշտություն չկա, քանի որ գործունեության համար նախատեսված տարածքները պատկանում է <<Մավր>> ՍՊԸ-ին: Շինարարական հրապարակը ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է շինհրապարակի տարածքում: Շինարարության համար բերվող խողովակների հատվածները, հանգույցները, ամրանակմախքները և այլն, շինհրապարակ են բերվելու բազաներից՝ անմիջապես տեղադրելու համար և հնարավորինս պետք է բացառվեն նրանց պահեստավորումը տեղում: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Նախատեսվող հեղուկ վառելիքի ժամանակավոր լցակետը տեղադրվելու է համապատասխան հարթակի վրա, հողի ծածկը և մակերևութային ջրերը հնարավորինս աղտոտումից պահպանելու համար: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Նախատեսվող աշխատանքների հետ կապված երկրաբանական վտանգ չի սպասվում, քանի որ աշխատանքների կատարման տեղամասերում սողանքներ չկան, իսկ շինարարության ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն կատարվելու:

Նախագծով նախատեսված է օգտագործել Դեբետ համայնքի և հարակից բնակավայրերի աշխատուժը:

Շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում ավագ, գլաքար, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն: Շինարարական նյութերի (ավագ, գլաքար, և

բետոնի պատրաստման համար) պահանջվող քանակությունը կարելի է վերցնել շինարարության շրջանում գոյություն ունեցող հանքավայրերից:

Բետոնե և երկաթբետոնե աշխատանքների ծավալը բավարարելու համար կօգտագործվեն տեղական շինարարական արդյունաբերական հզորությունները, կամ բետոնի համար իներտ նյութերի (խիճ, ավազ) հանքավայրեր, որտեղից արդյունահանումը կկատարվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օգտագործվող տեխնիկական միջոցների ցանկ:

N/N	Անվանում	Մակնիշ	Քանակ
1.	Ավտոինքնաթափ, բեռն.12տ.	ԿամԱ3 43253	1
2.	Բուլդոզեր, հզոր. 96կՎԱ	-	1
3.	Ավտոմոբիլային կրունկ, բեռն. 16 տ	Ивановец КС-35714	1
4.	Թրթուռավոր էքսկավատոր, շերեփի տարրողությունը 0.65 մ ³	-	1
5.	Եռակցման ագրեգատ ТДС-256У	-	2
6.	Ավտոբետոնախառնիչ, ծավալը 6մ ³	-	1
7.	Գլդոն	-	1
8.	Կոմպրեսոր	-	1

Բոլոր աշխատանքներն իրականացվում են էքսկավատոր - բուլդոզեր, տրանսպորտ - ավտոինքնաթափ համակարգով: Խրամուղու մշակումը կատարվում է հետադարձ բահով՝ էքսկավատորի օգնությամբ:

Փխրեցված գրունտը էքսկավատորով բարձվում է ավտոինքնաթափ և տեղափոխվում դեպի թափոնակույտ մինչև 3կմ հեռավորության վրա՝ համաձայնեցված Դեբետի համայնքապետարանի հետ:

ՓՀԷԿ-ի կառուցվող խողովակաշարը մետաղական է: Գետի հունի և ողողահունի տեղամասերը բարենպաստ են շինարարական աշխատանքների համար: Խողովակաշարը տեղադրվելու է խրամուղում, գոյություն ունեցող ճանապարհի եզրով: Ենելով սառեցման պայմաններից պահանջվող շերտով կատարվում է հետլիքը:

Խողովակաշարի անցկացման ուղեգծում ծառաթփուտային բուսականությունը բացակայում է:

Ավելցուկային գրունտը խողովակաշարի խրամուղու տեղադրման աշխատանքներից հետո տեղում հարթեցում է: Նախատեսվող հողային աշխատանքներից առաջացած բուսահողը՝ առանց պահեստավորման, խողովակաշարը խրամուղու տեղադրելուց հետո օգտագործվելու է տարածքի վերականգնման համար:

Ճնշումային խողովակաշարի անցկացման և ջրընդունիչ հանգույցի կառուցման հողային աշխատանքներից հանվող գրունտի ծավալը կազմում է 1200 մ³, որից

Հողի բերրի շերտը - 150.0 մ³

Մնացորդային գրունտ - 700մ³

Հետլիքը գրունտ - 353 մ³(այն լցվում է խողովակաշարի երկայնքով և տոփանվում է):

Ծատ փոքր մակերեսով հողային աշխատանքների, գրունտի հանման, բեռնման և տեղափոխման ժամանակ ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջանում են դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ:

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները առաջանում են հիմնականում էքսկավատորների, ամբարձիչների և բուլտոգերների աշխատանքի՝ փորման, և ավտոինքնաթափ մեքենաների բեռնման ժամանակ: Այդ արտանետումները չեն կարող էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

8.3 Բնառեսուրսների օգտագործում

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է շինարարական հարթակների ջրանի, ԻՏԱ և բանվորների ու վարորդների կենցաղային-տնտեսական, բետոնահանգույցի, ինչպես նաև ավտոտրանսպորտի ջրօգտագործման համար: Խմելու համար ջուրը բերվում է 20 լիտրանոց հատուկ նախատեսված տարողություններով: Ճանապարհների և շին.հրապարակների ջրանի և խոնավացման, ինչպես նաև բետոնի խառնուրդի պատրաստման համար ջուրը նախատեսվում է բերել ավտոմեքենայով (ավտոցիստեռոն):

Շինարարության ժամանակ անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկ

հ/հ	Անվանում	Միավոր	Պահանջարկ
1.	Ջուր	մ ³ /օր	4.0
2.	Խտացված օդ	հատ(100լ/ր)	1 կոմարեսոր
3.	Հող	մ ³ /շին ժամ.	150

- Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ջրային հոսքերը լրացուցիչ աղտոտումից զերծ պահելու նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.
- Ջրանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- բետոնային խառնուրդը գնել պատրաստի վիճակում, բացառելով այդ նպատակների համար ջրօգտագործումը,

- Նավթամթերքների և շինանյութերի ժամանակավոր պահեստները նախատեսել գետի ջրածածկումից հեռու տարածքներում:

8.4 Ազդեցություն հողածածկի վրա

<<Զանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցման աշխատանքների ժամանակ հողային ռեսուրսների վրա առաջացող ազդեցությունները կարող են կրել ժամանակավոր, սակայն վերականգնվող բնույթ: Հողածածկույթը կարող է վնասվել նոր ջրընդունիչի կառուցման, ճնշումային խողովակաշարի և օդային գծի անցկացման տարածքներում /փոքր մակերեսներով/: Հողային ռեսուրսների վրա ազդեցությունները պայմանավորված են բնահողի փորման և հանման աշխատանքների, տրանսպորտային միջոցների և տեխնիկայի օգտագործման հետ: Բացի այդ, հողածածկույթը, այդ թվում բուսաշերտը, կարող է անմիջականորեն աղտոտվել՝ շինհրապարակների տարածքներում կուտակված շինարարական և կենցաղային աղբով, շինհրապարակում կազմակերպված վառելիքի ժամանակավոր լցակետով, պահեստավորված շինանյութերով և թափոններով (յուղեր, քսուկներ, վառելանյութ, հին ավտոդրոյեր և այլն): Հողածածկի խախտումը և բուսաշերտի դեգրադացիան հնարավոր է շինհրապարակների կազմակերպման և շինարարական նյութերի ժամանակավոր պահեստավորման ընթացքում: Հողածածկի խախտում կարող է առաջացնել նաև կառուցների շինարարության ընթացքում առաջացող գրունտները և հանույթները:

ՓՀԵԿ-ի վերակառուցման ժամանակ հողային աշխատանքներ կիրականացվեն խողովակաշարի և ջրընդունիչի անցկացման հատվածներում: Հողային աշխատանքներից առաջացած հանվող հողային զանգվածը կկազմի $է 1200\text{մ}^3/\text{շին.ժամ}$, հետլիցը՝ $353 \text{ м}^3/\text{շին.ժամ}$: Հողային զանգվածի ավելցուկը՝ 700 м^3 ծավալով կօգտագործվի մերձակա տարածքի հարթեցման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որը կտեղափոխվի Դեբետ համայնքի ղեկավարի կողմից հատկացված վայր: Հողային աշխատանքների ժամանակ կհանվի 150.0մ^3 բերրի հող, որը կտեղափոխվի և կպահեստավորվի 100մ հեռավորության վրա հատուկ վայրում և հետագայում կօգտագործվի տարածքների վերականգնման և կայանային հանգույցի կանաչապատման համար:

8.5 Կենսաբազմազանություն

<<Զանախչի 2>> ՓՀԵԿ-ի վերակառուցման աշխատանքների արդյունքում հնարավոր բացասական ազդեցությունները կարող են արտահայտվել հետևյալ գործոններով.

Խողովակաշարի կառուցման տարածքում շինարարական աշխատանքներ կատարելիս կարող են վտանգվել ցամաքային կենդանիների բնադրման և ձվադրման վայրերը, խախտվել կենդանիների միգրացիոն և ջուր խմելու հնարավորությունները, Ծանր մեխանիզմների աշխատանքների ընթացքում առաջացած աղմուկը ի հայտ կը երի վախի գործոն, ինչը կենդանիներին կստիպի փոխել իրենց բնակության վայրը:

8.6 Բնապահպանական միջոցառումների ծրագիրը

8.6.1 Հողային ռեսուրսների պահպանություն

Հողաբուսաշերտին պատճառած վնասները նվազեցնելու, կամ մեղմացնելու նպատակով մեծ կարևորություն ունեն հետևյալ միջոցառումների իրականացումը.

- հանված բուսահողը կույտավորել պաշտպանված վայրերում հետագայում օգտագործելու նպատակով,
- ապահովել, որպեսզի բուսահողը չխառնվի գրունտի ներքին շերտի հետ,
- պահեստավորման համար ընտրել տրանսպորտային ուղիներից հեռու վայրեր,
- շինարարական տեխնիկայի մոտեցումը և աշխատանքների իրականացումը կատարել միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը,
- բացառել շինառառական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:

Գործունեության համար ընտրված տարածքների հողերը ներկայացված են խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացված տեսակներով, որտեղ տարածված է մարգագետնատափառանային բուսականությունը: Այդ հողերի բերրի շերտի խորությունը կազմում է 20-40սմ, իսկ հումուսի զանգվածային բաժինը 2%-ից ոչ պակաս է:

Գլխային հանգույցի և դերիվացիայի անցկացման հողային աշխատանքներից առաջացող բուսաշերտի ծավալի, տեղափոխման վայրի, պահպանության միջոցառումները նախատեսվել են << կառավարության 2017թ. փետրվարի 11-ի N 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ նախապես հեռացնել և պահեստավորել պահպանության ենթակա բուսաշերտը: Խողավակաշարի տարածում անմիջապես բուսահողը կօգտագործվի տարածքների վերականգնման համար, իսկ բուսահողի մնացած ծավալը կօգտագործվի կայանային հանգույցի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում:

Բացի բուսաշերտի անմիջապես պահպանության միջոցառումներից, մաքրվելու են նաև շինհրապարակները կուտակված շինարարական աղբից, առանձին բաքերում կուտակված վառելիքա-քսայուղերից, օգտագործված ավտոդողերից և այլ աղտոտումներից: Շինարարության ընթացքում առաջացած ավելցուկային գրունտները՝ հեռացվելու են՝ Դեբետ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված:

8.6.2 Մթնոլորտային օդ

ՓՀԵԿ-ի վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ, որոնց ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունը արտահայտվելու է փոշու և ծխագազերի արտանետումներով:

Նշված ազդեցությունը կանխարգելելու և հնարավորին չափ նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- շինարարական իրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով ավազը, ցեմենտը, գազը, խիճը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավագ, գազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի մոտեցումը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը,
- բացառել հողի փորման աշխատանքները սորունների բազմացման ժամանակահատվածում,
- բացառել շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում,
- պարբերաբար իրականացնել շինարարական տեխնիկայի շարժիչների կարգավորում:

8.6.3 Զրային ռեսուրսների պահպանություն

Չանախչի գետը տիպիկ լեռնային է, ինչպես տարվա, այնպես էլ բազմամյա կտրվածքով ունի չափազանց անհավասարաչափ ելքեր:

Չանախչի գետի ջրային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում է հանդիսանում ջրառի գետահատածքից ցած գետի հունում բնապահպանական թողքերի (ելքերի) ընդունված մեծության ապահովումը, այսինքն՝ անկախ ջրափական ջրահանգույթում ջրային էկոհամակարգի կայունությունը տարվա բոլոր սեզոններին: Նախագծում ընդունված է, որ բնապահպանական թողքերը պատվարի ստորին բիեֆ են անցնում ձկնանց կառուցվածքի միջոցով:

Գետի հաշվարկային հոսքերի հիման վրա կատարվել է տեխնիկատնտեսական հաշվարկ և <<Չանախչի 2>> ՓՀԵԿ-ի համար <<ՄԱՎՐ>> ՍՊ ընկերությանը տրամադրվել է թիվ 000027 տրվ. 06.02.2020թ. ջրօգտագործման թույլտվություն, որով սահմանվել է ՓՀԵԿ-ի համար հաշվարկային ջրաքանակները և բնապահպանական ելքի չափաքանակներն ըստ ամիսների:

Շահագործման փուլում, ջրային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում է հանդիսանում Զանախչի գետում բնապահպանական թռողք ապահովումն ըստ ամիսների, սահմանված է նաև ջրօգտագործման թույլտվությամբ:

Անկախ ջրապահանջից, այդ ելքը միշտ պետք է առկա լինեն գետի հունում, ապահովելու համար գետի ստորին հոսանքներում ջրային էկոհամակարգի կայունությունը տարվա բոլոր սեզոններին:

Շինարարական աղբի ժամանակավոր տեղադրումը պետք է իրականացվի գետի ջրատարածությունից դուրս՝ բացառելով աղբի թափանցումը դեպի գետ բարձր վարարային հորիզոնների ժամանակ:

Շահագործման փուլում աղբի կուտակումը պետք է կազմակերպվի գետի ջրատարածքից դուրս, համապատասխան տեղում:

Զրի որակի պահպանման նպատակով նախագծում ընդունված է ջրառի պատվարի կառուցման աշխատանքները սկսել ամռան սակավաջուր շրջանում, որի ժամանակ պատվարի գետահատածքում ջրի ելքերը հեշտությամբ հավաքվում և ստորին բիեֆ են տեղափոխվում ժամանակավոր ջրանցքի միջոցով, որի շնորհիվ հունը չորանում և հնարավորություն է ստեղծում հոսանքի կատարել պատվարի բետոնային աշխատանքները:

Գետահունը չորացումից պաշտպանելու նպատակով նախագծում որպես կազմակերպչական միջոցառում նախատեսված է չոր ժամանակաշրջանում ամսեկան երկու անգամ երկու ժամվա ընթացքում իրականացնել գետահունի խոնավեցման հնարավոր առավելագույն ելքերով ջրթողումներ:

Գետի ջրի որակի պահպանության համար ՓՀՀԿ-ի շահագործող անձնակազմի համար աղբարկողի տեղն ընտրվել է Զանանախչի գետի ափերից հնարավորին չափ հեռու: ՓՀՀԿ-ի շահագործող անձնակազմի համար առկա է սանհանգույց՝ կենցաղային կեղտաջրերի հեռացման համար:

8.6.4 Կենսաբազմազանության վրա ազդեցության նվազեցման միջոցառումները

Բուսատեսակների վրա հնարավոր ազդեցությունների կանխման, կամ մեղմման համար կարևոր միջոցառում է համարվում հողային աշխատանքների ժամանակ սկրեպերով հանված բուսահողի պահպանությունը, այնուհետև տարածքների վերականգնման համար օգտագործումը:

Խողովակաշարի անցկացման տարածքում բուսածածկույթը ժամանակավորապես կխախտվի, սակայն խողովակաշարի տեղադրումից հետո կատարվելու է հողի անմիջական հետլիցք, ինչի արդյունքում կրկին կվերական•նվի տարածքը և կստանա իր նախկին տեսքը:

Բուսաշերտի ավելացված ծավալներով կվերականգնվեն վնասված տարածքները, կամ այն կօգտագործվի քիչ արդյունավետ գյուղատնտեսական հողատեսքերի բարելավման նպատակով:

ՓՀԵԿ-ի վերակառուցման համար նախատեսված տարածքներում ծառաթփուտային բուսականությունը բացակայում է: Բուսատեսակների պահպանության նպատակով կարևոր է հողաշինարարական աշխատանքների իրականացումը նախատեսել բույսերի վաղ կամ ուշ վեգետացիայի ժամանակահատվածներում:

Վերակառուցման աշխատանքները << բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների աճելավայրերի և ապրելավայրերի վրա որևէ ազդեցություն չեն թողնելու, քանի որ << կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը հաստատելու մասին» N72-Ն և 71-Ն որոշումների համաձայն գործունեության տարածքներում << բույսերի և << կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակները բացակայում են:

ՓՀԵԿ-ի աշխատանքը առաջին հերթին ազդում է գետի իխտիֆառնայի վրա: Այս բացասական ազդեցությունն առավելագույն կերպով մեղմացված է պատվարի կազմում ձկնանցարանի նախատեսմամբ, որն իրենից ներկայացնում է բետոնե աստիճաններ, որոնցով ջուրը վերին բիեֆից իջնում է ներքին բիեֆ՝ նմանվելով ջրթափերի կասկադի: Զույգը վերին հոսանքներ է բարձրանում այդ ջրթափերի միջով:

Զկնուղին աստիճանածն է, կազմված է մուտքամասից, ելքամասից, 6 աստիճաններից և 6 բաժանմունքից, որոնք ունեն շախմատածն անցքեր: Զկնուղու ջրի հոսքի արագությունը մուտքամասում 0.25մ/վրկ է, խորքային անցքերում՝ 2.20մ/վրկ : Այս արագությունը և ձկնուղու աստիճանի 25 սմ բարձրությունը նպաստավոր է ձկների տեղաշարժի համար: Զկնուղու մուտքամասի բարձունքային նիշը ցածր լինելով ջրընդունիչ կառուցվածքի՝ տղմագտարանի կողային ջրընդունիչի նիշից, ապահովում է բնապահպանական ելքի մուտքի առաջնահերթությունը: Բացի ձկնանցարանից, ձկների պահպանությունը լիարժեք և հուսալի ապահովելու համար նախագծում նախատեսված է ջրառի գլխամասում, դերիվացիոն խողովակաշարի մուտքի վրա տեղադրել մանրաճաղավանդակ և նաև լրացուցիչ 5×5 մմ չափերով ձկնապաշտպան մետաղական չժանգուտվող ցանց, որը կկանխի նաև մանրաձկների մուտքը հիդրոագրեգատների թիակների վրա: Պատվարի շինարարության ընթացքում և գետի կենդանական աշխարհի, առանձնապես ձկների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարական աշխատանքները իրականացվելու են գետում բնակվող ձկնատեսակների ձվադրման ժամանակաշրջանից դուրս: Շինարարական աշխատանքների իրականացումը բացառվելու է ապրիլից մինչև մայիսի կեսը, իսկ աշնանը՝ հոկտեմբերի կեսից մինչև նոյեմբերի կեսը:

Ցամաքային կենդանական աշխարհի վրա նախատեսվող շինարարական աշխատանքների ազդեցությունների կանխարգելման կամ մեղման նպատակով հողային աշխատանքները իրականացվելու են համապատասխան ժամանակացուցով՝ ինչի արդյունքում կենդանական աշխարհի վրա ուղղակի վնասակար ազդեցությունը կլինի մինիմալ: Նախագծված տարածքի համար շինարարական աշխատանքներն իրականացնելու բարենպաստ ժամանակահատվածներն են՝ գարնանը ապրիլից մինչև մայիս ամիսները, իսկ աշնանը՝ սեպտեմբերից մինչև հոկտեմբերի կեսերը: Նշանակած

Ժամանակահատվածը հողի վրա և հողում ձվադրող թռչունների ու սողունների, ինչպես նաև սողունների ծմեռային քնի և ձվադրման ժամանակահատվածից դուրս է:

Տարածաշրջանի ցամաքային կենդանիները, իրենց մեծ շարժունակության շնորհիվ ժամանակավոր կարող են տեղափոխվել այլ տարածքներ: Տվյալ աշխատանքային նախագիծը չի ենթադրում պայթեցնան աշխատանքներ:

8.6.5 Բուսականության հարստացմանն ուղղված միջոցառումներ

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Նախագծվող ախատանքների արդյունքում չի վտանգվի տեղի բուսականությանը: Սակայն այդպիսի լանդշաֆտներում կառուցներ իրականացնելիս շինարարական նորմերով պահանջվում է կանաչապատել և բարեկարգել տարածքները: Տվյալ դեպքում նախատեսված է ՓՀՀԿ-ի շենքի կառուցումը ավարտելուց հետո հարթեցնել տարածքը, այն ցանկապատել, տնկել ծառեր և թփեր, ցանել խոտ:

Ծառերը և թփերը ընտրված են տվյալ տարածքին բնորոշ և լավ աճող տեսակներից:

Փոխառություն

Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ:

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների գումարները

NN	Նախատեսվող բնապահպանական միջոցառումները	Նախատեսվող գումարները (հազ.դրամ)
1	Տարածքի կանաչապատում	377.58
2	Տարածքի բարեկարգում	2290.95
3	Փոշենստեցում	450.0
4	Զկնապաշտպան միջոցառումներ՝ ձկնուղի ձկնապաշտպան ցանց	3351.05 88.77
	Ընդամենը	6558.35

Այսուակում ներկայացված բնապահպանական միջոցառումների համար անհրաժեշտ գումարները ամփոփված են նախահաշվում:

Ամփոփում

Չնայած ազդեցությունների մեղմացման ու նվազեցման նպատակով մշակված բնապահպանական միջոցառումների կիրառմանը, գործնականում անհրաժեշտ է շինարարության և շահագործման ընթացքում կիրառել հատուկ և մեծ ձախսեր չպահանջող հետևյալ մեթոդները.

- հստակորեն պահպանել շինարարական և սանիտարական նորմերը և կանոնները;
- շինարարության ժամանակ բետոնային աշխատանքները պետք է կատարվեն հաշվի առնելով հիդրոկարբոնատային ագրեսիվությունից անհրաժեշտ պաշտպանիչ տեխնոլոգիաների և նյութերի օգտագործումը;
- պատվարի շինարարության ընթացքում գետի կենդանական աշխարհի, առանձնապես ձկների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարական աշխատանքները իրականացնել գետում բնակվող ձկնատեսակների ձվադրման ժամանակաշրջանից դուրս (մայիս-հուլիս, հոկտեմբեր-նոյեմբեր);
- <<Զանախչի 2>> ՓՀԷԿ-ի շինարարության ընթացքում բացառել պայթեցման աշխատանքները;
- ժայռային ապարների փիրեցման անհրաժեշտության դեպքում աշխատանքները կիրականացվեն համապատասխան մեխանիզմներով (հիդրոմոլոր, պնեվմոմոլոր);
- ավելորդ գրունտների, շինարարական և կենցաղային աղբի, գուգարաններում կուտակված կեղտաջրերի և այլ առնչվող հարցերի լուծումը իրականացնել ըստ սանիտարա-հակահամաճարակային ծառայությունների համաձայնեցմամբ;
- շինարարության ընթացքում բացառել աղտոտող նյութերի արտանետումը արտաքին միջավայր;
- համեմատաբար ջրառատ տարիների հորդացման սեզոնին իրականացնել բնապահպանական հունավացման և ՓՀԷԿ-ից ներքև ընկած գետահովտի խոնավացման համար հնարավորին մեծ ջրթողքեր,
- Օգտագործված քսայուղերի և տրանսֆորմատորային յուղերի հավաքում և պահում հատուկ տարաներում և հանձնում՝ նշված յուղերը վերամշակող, լիցենզիա ունեցող կազմակերպություններին,
- << բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասինեն << կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում՝ բուսական ծածկույթի ուսումնասիրություն, Կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում՝ սահմանված ընթացակարգերի իրականացում:

Սոցիալական արձագանքման ծրագիր

Դեբետ համայնքի բնակչության սոցիալական վիճակը բարելավելու նպատակով, նախագծում նախատեսված են հետևյալ սոցիալական միջոցառումները.

- Տեղի բնակչները մասնակցություն կունենան ՓՀԷԿ-ի վերակառուցման շինարարական աշխատանքների, ինչպես նաև ՓՀԷԿ-ի շահագործման փուլում, որը կնպաստի նրանց կենսամակարդակի բարելավմանը;
- <<Մավր>> ՍՊԸ հնարավորինս մասնակցություն կունենա համայնքի անհետաձգելի սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին;
- Յուրաքանչյուր տարի համայնքային բյուջե կփոխանցվի գումար, ինչը ևս կնպաստի սոցիալական ոլորտի բարելավմանը:

<<Զանախչի 2>> ՓՀԷԿ-ի կառուցման տարածքի ուսումնասիրության, շրջակա միջավայրի վրա օբյեկտի հնարավոր ազդեցության և նախատեսված միջոցառումների արդյունավետության վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ ՓՀԷԿ-ի ՓՀԷԿ-ի վերակառուցման շինարարության և շահագործման լնդացքում նախագծում նախատեսված բնապահպանական լուծումների և միջոցառումների իրականացման շնորհիվ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը հասցել է նվազագույնի:

Վքարային իրավիճակների պլան

Սույն ենթաքաժնում ներառվել են՝ <<Քաղաքաշինության նախարարության 2013թ. ՀԱՏ 234-2004 «Ինժեներական շինություններ»-ի որոշման հետևյալ կետերը.

1) Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգություն՝

հիդրոտեխնիկական կառուցվածքի ունակություն (հատկություն), որը թույլ է տալիս ապահովել մարդկանց կյանքի, առողջության և սեփական շահերի, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի, շրջակա միջավայրի պաշտպանությունը;

2) Հիդրոտեխնիկական կառուցվածքի անվտանգության հայտարարագիր՝

փաստաբուղթ, որում հիմնավորվում է հիդրոտեխնիկական կառուցվածքի անվտանգությունը և սահմանվում են հիդրոտեխնիկական կառուցվածքի անվտանգության ապահովման միջոցառումները՝ ըստ դրա կարգի;

3) Հիդրոտեխնիկական կառուցվածքի անվտանգության չափանիշներ՝

հիդրոտեխնիկական կառուցվածքի վիճակի և շահագործման պայմանների քանակական ու որակական ցուցանիշների սահմանային արժեքներ, որոնք համապատասխանում են դրա վքարի ոխսի բույլատրվող մեծությանը;

4) Հիդրոտեխնիկական կառուցվածքի վրարի ռիսկի թույլատրելի մակարդակ՝

հիդրոտեխնիկական կառուցվածքի վրարի ռիսկի (ծախսեր և հետևանքներ) գնահատման չափանիշ՝ սահմանված նորմատիվային փաստաթղթերով:

Չանախչի-2 ՓՀԷԿ-ը արդեն շահագործվում է 10 տարի: Կայանային հանգույցի տարածքը կանաչապատված և բարեկարգված է: Տարածքում առկա կանաչապատ ծառաշերտը սանիտարապաշտպան գոտու դեր է տանում և պահում է ազրեգատների աղմուկի տարածումը շրջակա տարածքներ և մոտակա բնակելի կամ հանրային տարածքներ: Բացի այդ նախագծով նախատեսված հիդրոագրեգատների տեխնիկական վերազինումը նպաստում է ՀԷԿ-ի շահագործման փուլում աղմուկի, ինչպես նաև թրթուման մակարդակի նվազեցմանը, քանի որ ազրեգատները փոխարինվում են տեխնիկապես ավելի արդիական ազրեգատներավ, որոնց պարամետրերը բնապահպանական և աշխատողների սանիտարական նորմերի ապահովման տեսանկյունից բնութագրվում են նվազ ազդեցությամբ: Ազրեգատների տեղնիկական բնութագրի համաձայն տրանսֆորմատորային յուղի հետ շփումը բացառվում է, իսկ աղմուկի մակարդակը բնութագրվում է ցածր ցուցանիշով:

Կայանային հանգույցում, ՀԷԿ-ի շենքն ապահովված է ՀԷԿը սպասարկող անձնակազմի համար ջրամատակարարման և կենցաղային կեղտաջրերի հեռացման բավարար պայմաններով և համապատասխան սանիտարական սարքերով:

ՀԷԿ-ը սպասարկող անձնակազմի աշխատանքի անվտանգություն և սոցիալական պայմանների ապահովման միջոցառումները ներառում են հետևյալները.

- աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները և հակահրդեհային միջոցները,

- աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և գուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով /ինչն արդեն կա ՀԷԿ-ի շենքում/,

- աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով,

- անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի,

- աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում,

- պարբերաբար պետք է կարգաբերվեն տեխնիկա-տրանսպորտային միջոցների շարժիչները /շահագործման փուլում՝ ազրեգատների տեխնիկական վիճակը/, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, կամ փոխարինում,

- Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևաջրերի հետ շրջակա տարածքներ,
- բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ
- Հիդրոպրեզիսումների աղմուկի և թրթռումների մակարդակները պահել նորմերի սահմաններում /սարքավորումներն անձնագրային տվյալներ թրթռումների մակարդակի մասին, ուստի տվյալները շահագործման ընթացքում կճշտվեն իրականացնելով մոնիթորինգ:

Ստորև աղյուսակում ներկայացված է այն միջոցառումների ցանկը, որոնք կը լրացնեն շինարարական պայմանագրերում՝ շրջակա միջավայրի, մարդկանց առողջության և անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունները վերահսկելու համար:

Բնապահպանական կառավարման պլան

Հավելված 1

h/h	Հնարավոր բացասական ազդեցություն	Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ
1	Քանդված-հանված նյութերի, բետոնի մնացուկների, բերվածքների, շինարի ոչ պատշաճ հավաքման, տեղափոխման, հեռացման/պահեստավորման հետևանքով ջրի, օդի և հողի աղտոտում, լանդշաֆտի վատթարացում	<p>Զերք բերել փորված-հանված հողի ու շինարի հեռացման, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման, և այլնի համար համապատասխան թույլտվություններ և/կամ համաձայնեցումներ:</p> <p>Պահպանել շին աղրի նախական կուտակման գոտիները, որոնք որևէ վճառ չեն հասցնի բուսածածկին և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչներին:</p> <p>Տրանսպորտի աշխատանքը և շինթափոնների հեռացումը կազմակերպել ըստ սահմանված ընթացակարգի և այդ նպատակով նախապես հատկացված աղբավայրերում:</p> <p>Մշակել շինարարության համար անհրաժեշտ ժամանակավոր կառույցների տեխնիկական պայմանների ցանկը, ինչպիսիք են՝ մոտեցնող ճանապարհները, շինարարական ճամբարները, տրանսպորտային միջոցների կայանման վայրերը, սարքավորման և շինարարական նյութերի պահեստատեղերը և այլն:</p>
2	Լանդշաֆտի վատթարացում և հողերի	Եթե գյուղատնեսական նշանակության հողերի օգտագործումը անխուսափելի է, հողի վերին շերտը հանել

	Էրողիա	<p>և պահեստավորել բուսածածկից գուրկ տեղանքում, որից հետո այն օգտագործել տեղանքի բարեկազման համար:</p> <p>Փորված-հանված հողերը և այլ նյութերը կուտակել միայն այդ նպատակով նախատեսված վայրերում:</p> <p>Չինարարական աշխատանքների ավարտից հետո լանդշաֆտը վերականգնել/բերել սկզբնական տեսքի և ապահովել տարածքների բարեկարգում և կանաչապատում: Բուսածածկի վերականգնման ժամանակ նկատի ունենալ և օգտագործել բուսատեսակներ, որոնք բնորոշ են տվյալ լանդշաֆտին:</p>
3	Ազդեցություն կենսաբազմազանության վրա	<p>Ազդեցությունը մեղեմացնելու նպատակով ազդակիր տարածքում կատարել ծառատնկման աշխատանքներ՝ օգտագործելով բուսատեսակներ, որոնք բնորոշ են տվյալ լանդշաֆտին (վրացական և արևելյան կաղնու տեսակներ, թխկի, բոխի, ընկուզենի, մասրենի, ուռենի):</p> <p>Չինարարական աշխատանքների իրականացման համար մշակել ժամանակացույց և պլան՝ հաշվի առնելով թռչունների և վայրի կենդանիների վրա ամենաքիչ ազդեցությունը:</p> <p>Նախագծանախահաշվային աշխատանքներում նախատեսվել են ձկնապաշտպան միջոցառումներ՝ ձկնանցարան և ձկնապաշտպան մանրաճաղավանդակ:</p>
4	Մասնավոր կամ հանրային սեփականություն հանդիսացող հողի կամ այլ ունեցվածքի ժամանակավոր կամ մշտական առզրավում կամ օգտագործում ծրագրի իրականացման համար	<p>ՓՀԵԿ-ի շինարարության համար մշակել այնպիսի տեխնիկական մոտեցումներ և լուծումներ, որոնք թույլ կտան շինարարական աշխատանքներն իրականացնել հնարավորինս փոքր տարածքի հանրային սեփականություն հանդիսացող ունեցվածքի մշտական կամ ժամանակավոր օգտագործման:</p>
5	Վառելիքաքսուկային կամ այլ նյութերի արտահոսք	Պահպանել վառելիքաքսուկային, շինարարական նյութերի և քիմիկատների համար նախատեսված պահեստատեղերի շահագործման կանոնները:

		<p>Վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի վերահսկման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ վտանգավոր նյութերի պատշաճ պահեստավորում և պահպանում և հեռացում, ինչպիսիք են՝ նավթը, քսայուղերը, տարբեր տեսակի վառելանյութերը, տրանսֆորմատորային յուղը, բռնկուն և քայքայվող նյութերը: Քսայուղերը պետք է հավաքվեն և պահվեն հատուկ տարաներում:</p>
6	<p>Ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի աշխատանքի ընթացքում մթնոլորտային օդի ժամանակավոր աղտոտում (փոշի), անհանգստություն պատճառող աղմուկ և վիրրացիա</p>	<p>Հանված նյութերի և թափոնների տեղափոխման համար օգտագործել փակ /ձածկով/ բեռնատար ավտոմեքենաներ: Կախված տարվա եղանակից՝ լվանալ բեռնատարների անիվները հատուկ նախատեսված ավտովացման վայրերում՝ ճանապարհների վրա ցեխի և փոշու տեղափոխումը բացառելու նպատակով:</p> <p>Պարբերաբար ստուգել տրանսպորտային միջոցների և մեխանիզմների տեխնիկական վիճակը և ապահովվածությունը խլացուցիչներով:</p> <p>Աշխատանքներն ավարտելուց հետո տեղափոխել ավելորդ նյութերը, մաքրել շրջակա տարածքը և ջրել այն (բացի ձմռան ամիսներից):</p> <ul style="list-style-type: none"> - աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները և հակահրեթային միջոցները, - աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և զուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով /ինչն արդեն կա <ԷԿ-ի շենքում/, - աշխատակազմը պետք է ապահովի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով, - աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում, - պարբերաբար պետք է կարգաբերվեն տեխնիկատրանսպորտային միջոցների շարժիչները /շահագործման փուլում/ ագրեգատների տեխնիկական վիճակը/, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, կամ փոխարինում, - Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևացրերի
7.	<p><ԷԿ-ը սպասարկող անձնակազմի աշխատանքի անվտանգություն և սոցիալական պայմանների ապահովման միջոցառումները</p>	<p>Աշխատանքներն ավարտելուց հետո տեղափոխել ավելորդ նյութերը, մաքրել շրջակա տարածքը և ջրել այն (բացի ձմռան ամիսներից):</p> <ul style="list-style-type: none"> - աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և զուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով /ինչն արդեն կա <ԷԿ-ի շենքում/, - աշխատակազմը պետք է ապահովի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով, - աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում, - պարբերաբար պետք է կարգաբերվեն տեխնիկատրանսպորտային միջոցների շարժիչները /շահագործման փուլում/ ագրեգատների տեխնիկական վիճակը/, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, կամ փոխարինում, - Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևացրերի

		<p>հետ շրջակա տարածքներ,</p> <ul style="list-style-type: none"> - իրականացնել հիդրոագրեգատների աղմուկի և թրթուման մակարդակների չափումներ, - բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ:
--	--	---


Բնապահպանական մոնիթորինգի ծրագիր

Հավելված 2

Վերահսկվող տեղամաս կամ միջավայր	Վերահսկման առարկան կամ միջոցառումը	Վերահսկման եղանակը	Վերահսկման պարբե- րականությունը
Շինարարության ընթացքի փուլ			
Շինարարական հրապարակներ	Մթնոլորտային օդում փոշու պարունակությունը	Արտաքին գննում	Օրական
Չանախչի գետ	Գետի աղտոտման վտանգ	Արտաքին գննում	Օրական
Տեղամասերի նախապատրաստում	Ծառահատումներ չկան	-	-
ՓՀԵԿ-ի շահագործման փուլ			
Ձրան	Ձրային հաշվեկշռի պահպանում	Զենուդու արտաքին գննում	Օրական
	Ձրի ազատ հոսք գետի հունով	Ճաղավանդակների ստուգում և մաքրում	Օրական
ՓՀԵԿ-ի, գլխամասի և խողովակաշարի տարածքներ	Ծառերի, թփերի, նոր տնկիների պահպանություն	Արտաքին գննում	Օրական

ՓՀԵԿ-ի գլխամաս	Զրաթում ՀԵԿ-ի ջրաքանակի և բնապահպանական ելքի հաշվառում	Զրաչափիչ սարքավորումների ստուգում	Օրական
Տրանսֆորմատորային ենթակայան	Արտահոսկած յուղերի ստուգում	Արտաքին զննում	Օրական

Հավելված



Տրանսֆորմատորի տակ յուղորսիչ համակարգի տեղադրման սխեմա

Օգտագործված գլականության ցանկ

Հավելված 4

1. «Դայաստանի ազգային ատլաս» Հատոր Ա «Գեղոբեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ
2. Քարտեզագրական նյութ՝ հատուկ պահպանվող տարածքներով
3. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),
4. Բուսական աշխարհի մասին <<օրենքը, 1998թ.
5. Կենդանական աշխարհի մասին <<օրենքը, 2000թ.
6. <<հողային օրենսգիրք, 2001թ.
7. Բնապահպանական կրթության մասին <<օրենք, 2001թ.
8. <<ջրային օրենսգիրք, 2002թ.
9. Թափոնների մասին <<օրենքը, 2004թ.
10. Բնապահպանական վերահսկողության մասին <<օրենք, 2005թ.
11. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (09.08.2014թ.) ,
12. Քարտեզագրական նյութ՝ հատուկ պահպանվող տարածքներով
13. <<Կարմիր գիրք «Բույսեր», 2010թ.
14. <<Կարմիր գիրք «Կենդանիներ», 2010թ.
15. «<< բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» << կառավարության 14.09.2008թ.-ի N 967-Ն որոշում,
16. <<Փոքր իիդրոէեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներին հավանություն տալու մասին>> << կառավարության 2018թ. մարտի 1-ի արձանագրային որոշումը:
- 14 << կառավարության 2018թ. հունվարի 25-ի N 57-Ն որոշում
- 15, << կառավարության 2017թ. փետրվարի 11-ի N 1404-Ն որոշում
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» <<օրենքը

15 << կառավարության <<ԶՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ,
ԶՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> 2005թ. Հունվարի 20-ի N 64-Ն որոշում: